600.0173.17.05.17

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 մայիսի 2017 թվականի №173Ա
քաղ. Երևան

«ՄԱԳՎԱ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՐՈՒՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ հանձնաժողով) 2010 թվականի օգոստոսի 11-ի №432Ա որոշմամբ «ՄԱԳՎԱ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (այսուհետ՝ ընկերություն) տրամադրված ռադիոհաճախականությունների օգտագործման №0824 թույլտվության (այսուհետ՝ թույլտվություն) պայմանների 4-րդ կետի 8-րդ ենթակետով սահմանված է «Կոմֆորտ» ազդականշը,

բ) Հայաստանի Հանրապետության տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության (այսուհետ՝ նախարարություն) 2017 թվականի փետրվարի 13-ի №03/11.1/1960-17 գրության համաձայն՝ իրականացված ռադիոեթերի մոնիթորինգի և չափումների արդյունքում հայտնաբերվել է, որ ընկերությանը պատկանող ռադիոցանցն աշխատել է իրեն չհատկացված ազդականշով,

գ) հանձնաժողովը 2017 թվականի փետրվարի 17-ի №ԱԲ-370Հ գրությամբ ընկերությունից պահանջել է պարզաբանումներ ներկայացնել հանձնաժողովին իր կողմից թույլտվության պայմանների խախտմամբ շարժական ռադիոկապի ցանցի շահագործման վերաբերյալ, սակայն վերջինս հանձնաժողովին որևէ պարզաբանում չի ներկայացրել,

դ) հանձնաժողովը վարչական վարույթ է հարուցել ընկերության նկատմամբ՝ վերջինիս կողմից թույլտվության պայմանների խախտման փաստի ուսումնասիրության նպատակով, որի մասին ընկերությունը ծանուցվել է հանձնաժողովի 2017 թվականի մարտի 22-ի №ԱԲ-667Հ գրությամբ,

ե) վարչական վարույթի շրջանակում ընկերությունը 2017 թվականի ապրիլի 12-ին գրությամբ հայտնել է, որ իր կողմից շարժական ռադիոկապի ցանցը շահագործվում է թույլտվության պայմաններով սահմանված ազդականչով,

զ) հանձնաժողովը 2017 թվականի ապրիլի 21-ին փոխօգնության կարգով դիմել է նախարարություն՝ ընկերության կողմից ներկայումս շարժական ռադիոկապի ցանցը շահագործվող ազդականչի վերաբերյալ տեղեկատվություն ստանալու խնդրանքով, միաժամանակ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 47-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետի և 2-րդ մասի հիմքերով երեսնօրյա ժամկետով երկարաձգելով ընկերության նկատմամբ հարուցված վարչական վարույթը,

է) նախարարության 2017 թվականի մայիսի 10-ի №03/11/7592-17 գրության համաձայն՝ կատարված ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ ընկերության շարժական ռադիոկապի ցանցը ներկայումս շահագործվում է թույլտվության պայմաններով սահմանված ազդականչով, և

հիմք ընդունելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի «բ» կետը՝ հանձնաժողովը **որոշում է.**

1. Կարճել հանձնաժողովի կողմից 2017 թվականի մարտի 22-ից ընկերության նկատմամբ՝ թույլտվության պայմանների խախտման փաստի ուսումնասիրության նպատակով հարուցված վարչական վարույթը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ռ. ՆԱԶԱՐՅԱՆ

ք. Երևան
17 մայիսի 2017թ.